**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-25/6**

ք. Երևան 24.11.2025թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Վենյուէրա Հոլդինգ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Նորբերտ Զատկոյի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Վանաձորում ՈՒԵՖԱ ստանդարտներով ֆուտբոլի մարզադաշտի կառուցման/վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

ա. շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 22-րդ կետի պահանջներին համապատասխան,

բ. ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

գ. ներկայացնել աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

դ. պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

**4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 593 040 (հինգ հարյուր իննսուներեք հազար քառասուն) եվրո, ներառյալ ԱԱՀ-ն: 494 200 (չորս հարյուր իննսունչորս հազար երկու հարյուր) եվրոն Պատվիրատուն պետք է վճարի Կատարողին, իսկ 98 840 (իննսունութ հազար ութ հարյուր քառասուն) եվրոյին համարժեք դրամը պետք է վճարվի ՀՀ պետական բյուջե:**

**Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:**

**Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:**

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում եվրոյով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա նախավերջին աշխատանքային օրը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին.

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկ ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս պահուվի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Պայմանագրի վավերապայմաններում Կատարողի կողմից նշված բանկային տվյալները պետք է համապատասխանեն միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով պայմանագրի ապահովման և դրան կից վճարման պահանջագրի բանկային տվյալներին:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011055424
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

________________ Գ. Եղիազարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**

<<Վենյուէրա Հոլդինգ>> ՍՊԸ
Ռոբոտնիցկա 286, Պովազսկա Բիստրիցա
017 01, Սլովակիա
Հ/Հ SK72 0900000000005239753437
ՀՎՀՀ 2024129701

Տնօրեն՝

---------------------------- Ն. Զատկո
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
24.11.2025 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-25/6 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայության | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | չափման միավորը | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 71241200/71 | եվրո | 593 040 եվրո | 1 | ՀՀ | պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից 270 օրացուցային օր |

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Նախագծման հիմքը | ՀՀ կառավարության 07.08.2025թ. N 1089-Ա որոշում |
| 2. | Պատվիրատու | ՀՀ քաղաքաշինության կոմիտե |
| 3. | Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր | Ճարտարապետահատակագծային առաջադրանքը և ենթակառուցվածքների վերաբերյալ տեխնիկական պայմանները կամ դրանց հնարավորության վերաբերյալ շահագործողի գրությունները կտրամադրվեն պատվիրատուի կողմից |
| 4. | Նախագծման փուլեր | Նախնական փուլ - Տարածքի հետազոտություն, Նախագիծ և աշխատանքային փաստաթղթեր |
| 5. | Ելակետային տվյալներ | Ֆուտբոլային մարզադաշտը տեղակայվելու է 2,68 հա հողատարածքի վրա: Տարածքում ներկայումս առկա է ՈւԵՖԱ 2 կատեգորիա ֆուտբոլային մարզադաշտ՝ 3000 հանդիսատեսի համար և ադմինիստրատիվ մասնաշենք: Նախագծի ընդհանուր մեթոդաբանությունը՝ RIBA (Աշխատանքային պլանը շենքերի նախագծման և կառուցման գործընթացի համար սահմանված վերջնական մոդելն է) (տես՝ https://www.architecture.com/knowledge-and-resources/resources-landing-page/riba-plan-of-work): |
| Նախագծերի կազմման համար հիմք հանդիսացող գործընթացներ | | |
| 6. | Ինժեներագեոդեզիական հանութագրում, հողհատկացման հիմքերի ձեռքբերում | Ըստ անհրաժեշտության կազմել գոյություն ունեցող շենքերի և կառույցների տեխնիկական վիճակի եզրակացություն: Իրականացնել տարածքի գեոդեզիական հանութագրում, հատակագծերի և բնորոշող կտրվածքների կազմում՝ մշակում: Նշել գոյություն ունեցող ինժեներական ցանցերը, ոչ համայնքային պատկանելության տարածքներն ու կառույցները: Հանույթը համաձայնեցնել ինժեներական ցանցերը շահագործող և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ: Ամրագրել և ներկայացնել հենանիշերի (репер) ցուցակ: |
| 7. | Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական հետազոտություն | Համաձայն գործող նորմերի պահանջների՝ հորատման միջոցով իրականացնել ինժեներաերկրաբանական հետազորություններ և տրամադրել մանրամասն եզրակացությունները ու տեխնիկական պահանջներ, ըստ հորատահանուկի լաբորատոր փորձարկման արդյունքների որոշել գրունտների տեսակները, ինչպես նաև դրանց մշակման կարգերը: Ինժեներաերկրաբանական հետազոտության հորատման տեղերի ընտրությունն իրականացնել նախագծի ճարտարապետի |

| | | |
|---|---|---|
| | | հանձնարարականով, գեոդեզիական հանույթի հատակագծում նշված կոորդինատներով, որոնք հնարավորինս մոտ պետք է լինեն կրող առանցքներին:<br>Հորատահանուկի (керн) համար ապահովել պահպանում, նմուշների համար նախատեսված արկղերով մինչև հիմքի աշխատանքների ավարտ:<br>Գրունտային ջրերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում: |
| 8. | Ինժեներական հաղորդակցուղիների ուսումնասիրություն | Գոյություն ունեցող արտաքին ինժեներական հաղորդակցուղիների (ջրամատակարարում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում) տեխնիկական վիճակի ուսումնասիրություն, եզրակացությունների ձեռքբերում և հատակագծային լուծումների ընտրության տեխնիկատնտեսական հիմնավորում: |
| 9. | Ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ | Ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ, եթե այդպիսիք անհրաժեշտ են (շրջակա միջավայր, կրթություն, մշակույթ և սպորտ, արտակարգ իրավիճակներ, առողջապահություն և այլն): |
| 10. | Կառույցի բնութագիրը և նախագծային պահանջներ | • Նախատեսվում է մշակել ՈւԵՖԱ ստանդարտներով 11000 հանդիսականի համար նախատեսված ֆուտբոլի մարզադաշտի նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ ՈՒԵՖԱ 4 կատեգորիա պայմանով:<br>Նախատեսել՝<br>• Ըստ անհրաժեշտության գոյություն ունեցող շինությունների քանդման նախագիծ<br>• շուկայի հետազոտություն և բիզնես պլանի մշակում, ինչպես նաև պահանջվող ներդրումներ՝ պահանջվող չափանիշներից բացի, որպեսզի ճիշտ գնահատվի մարզադաշտը անկախ ֆինանսական միավորի վերածելու առևտրային ներուժի տարբերակները,<br>• Կարևոր և հատուկ անձանց հյուրընկալության համար նախատեսված տարածքներ:<br>• Մարզիկների, մրցաշարերի պաշտոնական ներկայացուցիչների, մամուլի հարմարավետ և անխափան աշխատանքի համար պայմաններ:<br>• Տարածքներ՝ ադմինիստրատիվ, տեխնիկական, ծառայողական անձնակազմի սպասարկման, տարածքի մաքրման, աղբի հավաքման և հեռացման համար, ինչպես նաև անհրաժեշտ տարածքներ սնվելու և սննդի ընդունման կետերի, տնտեսական սենյակների համար:<br>• Մարզադաշտի պրոֆեսիոնալ լուսավորություն: Մարզադաշտի լուսավորությունը պետք է կազմակերպել այնպես, որ ամբողջ խաղահրապարակը լուսավորվի համանման և համաչափ՝ առանց ստվերների, իսկ լուսավորության մակարդակը պետք է համապատասխանի ՈւԵՖԱ 4-րդ կատեգորիայի միջազգային հեռարձակման միջազգային չափանիշներին:<br>• Այցելուների և մեքենաների տեղաշարժի համակարգված և միասնական պլան՝ ներառյալ հատուկ կայանման տեղեր մեքենաների համար ըստ մարզադաշտի կատեգորիայի, սահմանելով յուրաքանչյուր խմբի ժամանման կետերը, դրանց հետագա տեղաշարժերը և բաշխումը ամբողջ ներքին տարածքում և տեղավորումը մարզադաշտում խաղից առաջ, ընթացքում և հետո: Բոլոր խմբերի համար անհրաժեշտ է ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց հասանելիության համապատասխան պայմաններ: Մարզադաշտի երթևեկության հոսքը նախագծելիս/մշակելիս պետք է հստակորեն սահմանել հետևյալ հիմնական կատեգորիաների համար.<br>• Լայն հասարակայնություն,<br>• Կարևոր անձինք և պետական պաշտոնյաներ,<br>• Խաղացողներ, մարզիչներ և ուղեկցող անձնակազմ,<br>• Մրցավարներ և խաղի այլ պաշտոնական ներկայացուցիչներ,<br>• Լրագրողներ,<br>• Ուղեկցորդներ և մասնավոր անվտանգության ծառայությունների ներկայացուցիչներ, |

- Սպասարկող անձնակազմ,
- Ադմինիստրատիվ/վարչական անձնակազմ,
- Կոմերցիոն/առևտրային կետերի աշխատակիցներ,
- Արտակարգ իրավիճակների ծառայությունների և հասարակական անվտանգության անձնակազմ
- Հրշեջ և շտապօգնության մեքենաներ:

Պետք է նախատեսված լինեն հետևյալ սենքերը

- Սրահներ
- Հանդերձարաններ ս/հ, ցնցուղարաններով
- Վարժանքների սրահ
- Բժշկական զննման սենյակ խաղադաշտի մոտ
- Դոպինգի հսկողության տարածք
- ՈՒԵՖԱ-ի պաշտոնական ներկայացուցիչների համար նախատեսված տարածքներ
- Վարչական մաս/ադմինիստրացիայի հարմարություններ
- Տեխնիկական սպասարկման անձնակազմի համար հարմարություններ
- VIP տարածքներ հատուկ հյուրերի համար
- Skybox-եր և բաց VIP տարածքներ
- Հասարակական սննդի կետեր
- Մամուլի/լրագրողների համար նախատեսված տարածքներ, մամուլի լոջա, մամուլի կենտրոն, մամուլի ասուլիսի դահլիճներ
- Հեռուստատեսային և ռադիոմեկնաբանների համար տարածքներ (ստուդիա)
- Ակումբների պաշտոնական անդամների և երկրպագուների համար տարածքներ
- Անվտանգության անձնակազմի համար նախատեսված հսկողության սենյակներ և ժողովների դահլիճ:
- Վերահսկիչ սենյակ (մեդիա և անվտանգության)
- Առաջին բուժօգնության կայաններ
- Սանհանգույցներ
- Տեսախցիկների համար նախատեսված համապատասխան տարածքներ/ TV տեսախցիկների տեղեր (TV հեռարձակում)
- Դաշտում աշխատող լուսանկարիչների ու լրագրողների համար նախատեսված տարածքներ
- Էքսպրես հարցազրույցների համար նախատեսված տարածքներ (mixzone)
- Ֆուտբոլի VAR (Տեսողական օգնական մրցավար) տարածքներ և համապատասխան կապեր
- ՈՒԵՖԱ-ի չափանիշներին համապատասխան մարզադաշտին անհրաժեշտ և այլ տարածքներ

Լրացուցիչ պահանջներ

- Դաշտի ողջ պարագծով պետք է նախատեսված լինի բնական կամ արհեստական խոտածածկ տարածք՝ առնվազն 1.5մ լայնությամբ:
- Դաշտի արտաքին մասերում՝ հանդերձարանների ուղղությամբ նստարաններ՝ երկու թիմերի համար, մարզվելու գոտիներ՝ փոխարինող խաղացողների համար և տեսախցիկների տեղադրման համար համապատասխան կետեր, տարածքներ/սենյակներ՝ հանդիպման պաշտոնական ներկայացուցիչների համար:
- Հանդիսատեսի յուրաքանչյուր նստատեղ պետք է ունենա անարգել տեսարան դեպի դաշտը, այսինքն՝ տեսանելիությունը չպետք է արգելափակվի գովազդային վահանակներով կամ այլ մշտական կամ ժամանակավոր կառույցներով
- Մարզիկների և հանդիպման պաշտոնական ներկայացուցիչների մուտքը դեպի ֆուտբոլի դաշտ պետք է լինի խաղադաշտի երկու հանդերձարանների միջև գտնվող թունելի միջոցով: Թունելի հարևանությամբ պետք է նախատեսված լինեն սանհանգույցներ

| | | |
|---|---|---|
| | | • Ֆուտբոլի դաշտին մոտ՝ ողջ պարագծով, պետք է լինեն հատուկ զոնաներ նախատեսված լուսանկարիչների շարժական և անշարժ տեսախցիկների, անվտանգության անձնակազմի և խաղի կարգադրիչների (ստյուարդ) համար<br>• Ֆուտբոլի դաշտը պետք է ունենա լրացուցիչ մուտք՝ տարբեր սարքավորումների և տրանսպորտային միջոցների համար, որոնք կարող են անհրաժեշտ լինել արտակարգ իրավիճակներում (ոստիկանության մեքենաների, շտապօգնության մեքենաներ, հրշեջ մեքենաներ և այլն):<br>• Նախագծով նախատեսել տեսահսկման համակարգ, ձայնային համակարգ և հանրային բարձրախոսային համակարգ, ցուցատախտակներ և վիդեո պատեր, ցուցիչներ/ցուցանակներ, հեռուստատեսային հեռարձակման հագեցվածություն, լուսավորություն/լուսարձակում,վթարային էլեկտրամատակարարում,<br>• Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել շրջակա միջավայրի վրա աղմուկի ազդեցությանը և ձեռնարկել միջոցառումներ աղմուկի նվազեցման համար, նախատեսել համապատասխան ակուստիկա՝ ձայնի օպտիմալ դինամիկա, որը կստեղծի հատուկ մթնոլորտ մարզադաշտում, միևնույն ժամանակ բացասական ազդեցություն չունենալով հարակից տարածքների վրա և դրանց կենսագործունեության համար բարենպաստ տարածական միջավայրի ստեղծման վրա<br>• նախագծով նախատեսել ներքին ինժեներական ենթակառուցվածքների /սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, էլեկտրամատակարարման, օդափոխության և օդորակման, սառնամատակարարման, հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման, ինքնաշխատ հրդեհաշիջման համակարգ, տեսահսկման, գազամատակարարման կապի, անվտանգության համակարգերի, ջրահեռացման, հողանցման/ համակարգերի կառուցում, շենքի արդիական ներքին հարդարում,<br>• շենքը պետք է ապահովված լինի տարբեր SS համակարգերով և գործիքներով (ինտերնետ, ներքին մոնիթորինգ, անվտանգության սարքավորումներ, վերահսկվող և թույլատրված մուտք դեպի տարածք),<br>• նախագծով նախատեսել շենքի համալրում հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժն ապահովող անհրաժեշտ նախագծային լուծումներով և սարք-սարքավորումներով (թեքահարթակներ, առանձնացված սանհանգույցներ՝ համապատասխան ինվենտարով, բազրիքներ, լրացուցիչ լուսավորություն, համապատասխան հիմնավորմամբ վերելակ կամ վերհան սարք: Նախագծում վերելակներ և կաթսայատներ նախատեսելու դեպքում՝ արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացությունների ձեռքբերում նախագծողի կողմից<br>• նախագծով նախատեսել տարածքի բարեկարգում, ասֆալտապատում, կանաչապատում, արտաքին լուսավորություն, ոռոգման համակարգ, ինչպես նաև արտաքին հաղորդակցուղիների կառուցման, վերակառուցման կամ քանդման և այլն (եթե մասնագիտական եզրակացությամբ դրանք ենթակա կլինեն), էներգետիկ նշանակության կառույցներ՝ սարքեր-սարքավորումներ (էլեկտրաենթակայաններ, գազամատակարար-ման, ջրամատակարման, կոյուղու, ջրահեռացման ապահովման) ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների՝ ծրագրի շրջանակներում անհրաժեշտ տարածքի ընդգրկումով,<br>• Մարզադաշտի մոտակայքում գտնվող ճանապարհային և երկաթուղային ցանցերի համապարփակ մշակում՝ հիմնվելով հաճախորդի կողմից մարզադաշտին մոտ գտնվող տրանսպորտային ենթակառուցվածքների վերաբերյալ տրամադրված տվյալների վրա |

| | | |
|---|---|---|
| | | (տեսակներ, հզորություն, ընդլայնման հնարավորություն, օգտագործման վիճակագրություն և այլն)։Նախատեսել ավտոկայանատեղի՝ UEFA-ի պահանջներին համապատասխան կահավորմամբ և կայանատեղիների քանակի ապահովմամբ: Ընդ որում մարզադաշտ այցելող տարբեր խմբերի համար պետք է նախատեսել առանձին ավտոկայանատեղեր, ավտոկայանատեղիների պլանավորման ռազմավարության մշակում և լիազոր մարմինների հետ համաձայնեցում,<br>• նախագծում նախատեսել այլընտրանքային էներգիայի օգտագործման հնարավոր միջոցներ (արևային ջրատաքացուցիչներ և ֆոտովոլտային պանելներ)՝ օբյեկտում տաք ջրամատակարարում և էլեկտրամատակարարում ապահովելու համար<br>• պահանջվող բոլոր սարք սարքավորումների, գույքի (ներառյալ սպորտային) վերաբերյալ մասնագրերում ներառել պահանջվող մանրամասն տեխնիկական բնութագրերը, անհրաժեշտության դեպքում հաշվարկներով հիմնավորված:<br>• նախագծման ընթացիկ ծառայությունները աշխատանքային կարգով համաձայնեցնել պատվիրատուի հետ, բոլոր փուլերում՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները (այդ թվում հաշմանդամների տեղաշարժի համար մատչելի պայմանների ապահովման) և օգտագործելով արդի մոտեցումներ, ծագած բոլոր հարցերը քննարկելով պատվիրատուի հետ:<br>• Մանրամասն կահավորման նախագիծ (կահավորանքի մանրամասն բնութագրերով և մոդելավորմամբ, որը պետք է ներառված լինի նախահաշվում)<br>• Նախագծի վերաբերյալ այլ մանրամասնությունները և պահանջները կներկայացվեն պատվիրատուի կողմից նախագծի էսքիզային տարբերակի քննարկման ժամանակ:<br>• Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) եզրակացության ձեռքբերում (դրա անհրաժեշտության դեպքում):<br>• Ըստ անհրաժեշտության իրականացնել նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակում<br>• Մարզադաշտի թվային նշանների համակարգ<br>• IPTV համակարգ (հեռուստահամակարգեր միջանցքների և VIP տարածքների համար)<br>• Հանրային հայտարարման համակարգ (PA) դահլիճների համար<br>• Դահլիճների հրդեհային ազդանշանային համակարգ և արտակարգ տարհանման համակարգ (EVAC)<br>• Մարզադաշտի արտաքին նավիգացիոն համակարգ (նշաններ)<br>• Մարզադաշտը պետք է համապատասխանի «ՈւԵՖԱ-ի անվտանգության և կարգի կանոններին» (UEFA Safety and Security Regulations), «Սպորտային տարածքների անվտանգության ուղեցույցին» (նաև հայտնի է որպես «Կանաչ ուղեցույց»)<br>• Մարզադաշտի կոնստրուկտորական լուծումները պետք է իրականացվեն համապատասխան միջազգային և տեղական նորմերով սահմանված պահանջներին:<br>• TV տեսախցիկների դիրքեր<br>• Նախագծի մշակման վերաբերյալ մնացած բոլոր պահանջները ներկայացված են «ՈՒԵՖԱ-ի մարզադաշտերի ենթակառուցվածքների կարգավորումներին» (UEFA Stadium Infrastructure Regulations)՝ պայմանագրի ստորագրման պահին գործող վերջին տարբերակում /կցվում է/<br>• ՖԻՖԱ-ի «Կանաչ գոլ» ծրագրին համապատասխանություն ըստ անհրաժեշտության<br>• հաշվի առնելով ՈՒԵՖԱ-Ի ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՈՐԱԿԻ ՁԵՌՆԱՐԿ-ի պահանջները՝ մարզադաշտերը ավելի գրավիչ և յուրօրինակ դարձնելու համար խորհուրդ է տրվում ճարտարապետական լուծումներում ներառել և կիրառել՝ |

| | | |
|---|---|---|
| | | ✓ տեղական և տարածաշրջանային սիմվոլներ, որոնք արտացոլում են տվյալ տարածաշրջանի ավանդույթները, նախշերը, գույները և այլն,<br>✓ մարզադաշտի նախագիծը տեղական ավանդույթներով և մշակութային առանձնահատկություններով ընդգծելու ուղիներ: Էֆեկտը/ազդեցությունը բարձրացնելու համար ավանդական տարրերը կարելի է համադրել ժամանակակից լուծումների հետ,<br>• Ընթացիկ բոլոր լուծումներ քննարկել Պատվիրատուի հետ |
| 11. | Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ | Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝<br>• «Քաղաքաշինության մասին» օրենք<br>• «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենք<br>• «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենք<br>• «ՈՒԵՖԱ-ի մարզադաշտերի ենթակառուցվածքների կարգավորումներ»՝ վերջին տարբերակները՝ պայմանագրի ստորագրման պահին (UEFA Stadium Infrastructure Regulations),<br>• «ՈՒԵՖԱ-Ի ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՈՐԱԿԻ ՁԵՌՆԱՐԿ»<br>• ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի դեկտեմբերի 30-ի ՀՀՇՆ 31-03.09-2024 «Մարզական օբյեկտներ. բաց տիպի մարզական շենքեր եվ շինություններ. նախագծման նորմեր» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու մասին N 32-Ն հրաման<br>• ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի «ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 263-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 04-Ն հրաման,<br>• ՀՀ քաղաքաշինության նախարարի 2003 թվականի մայիսի 13-ի «ՀՀՇՆ IV-11.03-03-02 (ՄՍՆ 2.02-05-2000) «Ավտոկայանատեղեր» շինարարական նորմերը հաստատելու մասին» N 28-Ն հրաման<br>• ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 21-ի «ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի N 11-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 12-Ն հրաման,<br>• ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀՇՆ 20-04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 102-Ն հրաման,<br>• ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի ՀՀՇՆ 31-03- «Հասարակական շենքեր և շինություններ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 |

| | | |
|---|---|---|
| | | թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին> N 95-Ն հրաման,<br>• ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի «ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի հաստատման մասին» N 253-Ն հրաման,<br>• ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի «ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական հորմերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու և մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 56-Ն հրաման,<br>• ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004 թվականի օգոստոսի 4-ի «ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» շինարարական նորմերը հաստատելու մասին» N 83-Ն հրաման,<br>• ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի «ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 78-Ն հրաման<br>• ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի «ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 80-Ն հրաման,<br>• ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՀՇՆ 40-01.02- «Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 01.10.2001թ N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 103-Ն հրաման,<br>• ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» N 1504-Ն որոշում,<br>• ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ<br>• ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի <Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին> N596-Ն որոշում<br>• ՀՀ կառավարության 13.12.2007թ <ՀՀ պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով |

| | | |
|---|---|---|
| | | ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և ՀՀ կառավարության 14.06.2001թ N 532 և 03.05.2001թ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին> N 1490-Ն որոշում,<br>• ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2021 թվականի հունվարի 14-ի ՀՀՇՆ 52-01--«Բետոնե եվ երկաթբետոնե կոնստրուկցիաներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփխություն կատարելու մասին N 02-Ն հրաման<br>• ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՀՇՆ 53-01-«Պողպատե կոնստրուկցիաներ» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին N 104-Ն հրաման<br>• ՀՀ կառավարության 16.02.2006թ թիվ 392-Ն որոշում «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին»<br>• ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 22.02.2024թ ՀՀՇՆ 21-01.01-2024 «Շենքերի և շինությունների հակահրդեհային պաշտպանության համակարգեր, ավտոմատ հրդեհաշիջման և հրդեհային ազդանշանման կայանքներ նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2005 թվականի մայիսի 2-ի N 75-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին N 10-Ն հրաման,<br>• ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 11.09.2017թ N128-Ն հրամանի համաձայն:<br>և այլ (պարտադիր այլ նորմատիվա-տեխնիկական փաստաթղթեր) |
| 12. | Նախագծման փուլերը | Նախագծային աշխատանքների իրականացում 3 (երեք) փուլով<br>1. Նախնական փուլ - Տարածքի հետազոտություն, հետազոտություններ և նախնական նախագծում<br>2. «Նախագիծ» փուլ<br>3. «Աշխատանքային Փաստաթղթեր» փուլ<br>Ընդ որում Նախնական փուլից հետո մնացած փուլերի մեկնարկը կլինի «ՈՒԵՖԱ»-ի կողմից ծրագրի իրականացման վերաբերյալ պաշտոնական դիրքորոշում ստանալուց հետո, ինչից ելնելով կքննարկվի ծրագրի հետագա իրականացումը: Կապալառուն երկրորդ և երրորդ փուլերի աշխատանքների մեկնարկելուց առաջ պետք է համաձայնեցնի Պատվիրատուի հետ:<br>Նախագծման փուլերը և դրանց ծավալը՝ ըստ RIBA, տես Հավելված N 1.1: |
| 13. | 1. «Նախնական փուլ-Տարածքի հետազոտություն» | Առանձնահատվածների տվյալների հավաքում, առկա շենքերի և կառույցների տեխնիկական վիճակի գնահատում, հողամասի երկրաչափական չափագրումների իրականացում, հողամասի պլանների և բնութագրիչ հատվածների պատրաստում և մշակում, ինժեներա-հողաբանական և գեոֆիզիկական հետազոտությունների իրականացում, առկա շենքերի չափումների կատարում, տվյալների հիմնական ուսումնասիրություն:<br>Ազդեցություն առկա ֆուտբոլի դաշտի վերակառուցման հնարավորության մասին՝ ՈւԵՖԱ չափանիշներին համապատասխան 4-րդ կատեգորիայի ֆուտբոլի դաշտի վերափոխման համար:<br>Նախնական (կոնցեպտուալ) նախագծի ներկայացում՝ հիմնված վերոնշյալ ուսումնասիրությունների վրա, նախնական մայր պլան, նավիգացիայի և մարդկանց ու տրանսպորտային միջոցների հոսքի հիմունքներ, կոնցեպտուալ ճարտարապետական նախագիծ, կիրառելի տեխնոլոգիաների, լուծումների և մատակարարների ցանկ: |

| | | |
|---|---|---|
| | 2. «Նախագիծ» | Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա ներկայացվում է հաստատված էսքիզային նախագիծ, մշակված գլխավոր հատակագիծ, հանույթի կտրվածքներով անհրաժեշտ միջոցառումներ և կառուցվածքների տեղադիրքերով:<br>➢ Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ (կամ հողամասի գլխավոր հատակագիծ)<br>➢ Ճարտարապետաշինարարական մաս<br>Ծավալահատակագծային լուծումներ, ճակատներ, կտրվածքներ, հատակագծեր, նկարագրեր<br>- Եռաչափ մոդելավորում<br>➢ Կոնստրուկտիվ մաս<br>Կոնստրուկտիվ լուծումներ՝ հիմնական բնորոշ հատվածների<br>- Առաջարկվող հիմքերի տեսակների վերաբերյալ, անհրաժեշտ հիմնավորումով<br>- Երկաթբետոնյա շրջանակների վերաբերյալ առաջարկներ՝ կտրվածքի չափեր և այլն<br>- Արտաքին պատերի կառուցման ձևավորման և նյութի առաջարկներ<br>- Հնարավորության դեպքում կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն<br>➢ Արտաքին ինժեներական ցանցերի լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր, որոնք անհրաժեշտ կլինեն մատակարար ընկերություններից տեխնիկական պայմանների ձեռք բերման, հիմնվելով 8-րդ բաժնով նախատեսված ուսումնասիրության արդյունքներով:<br>- Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն<br>➢ Ծրագրի նախնական ֆինանսական գնահատում |
| 14. | 3. «Աշխատանքային փաստաթղթեր» | <u>Նախագծի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր</u><br>1. Ընդհանուր բացատրագիր հատոր<br>- Բացատրագիր, հաշվարկներ, վերլուծություններ,<br>- ելակետային տվյալներ և փաստաթղթեր<br>- Կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն<br>- Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն<br>- բնապահպանական ռիսկերի նվազեցման միջոցառումների նկարագրություններ, ելակետային տվյալներ, Ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն), նախագծման առաջադրանք<br>- և այլն<br>2. Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ (կամ հողամասի գլխավոր հատակագիծ)<br>3. Ճարտարապետաշինարարական մաս<br>- Ծավալահատակագծային լուծումներ, ճակատներ, կտրվածքներ, հատակագծեր, մասնագրեր և մանրամասն հանգույցներ /այդ թվում շենքերի կահավորման հատակագիծ/<br>- Եռաչափ մոդելավորում<br>- Մանրամասն կահավորման նախագիծ (կահավորանքի մանրամասն բնութագրերով և մոդելավորմամբ)<br>4. Կոնստրուկտիվ մաս<br>- Կոնստրուկտիվ լուծումներ,<br>- կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն<br>5. Ինժեներական (ներքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր)<br>- սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջրահեռացման, հրդեհաշիջման, ջեռուցման, էլեկրամատակարարման, հողանցման, օդափոխության, օդորակման, սառնամատակարարման՝ ըստ |

| | | |
|---|---|---|
| | | պահանջի, տեսահսկման, գազամատակարարման, հակահրդեհային ազդանշանման, կապի և անվտանգության համակարգերի և այլն,<br>- Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն<br>6. Ֆոտովոլտային համակարգի նախագիծ՝ ըստ անհրաժեշտության<br>7. Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ՝ ներառյալ սարք-սարքավորումներ, ՀԾԿ-ի կողմից սահմանված միանվագ ծախսեր և այլ անուղղակի ծախսեր<br>8. Գնահատված ծավալաթերթ-նախահաշիվ (միավոր գներով) / եռալեզու՝ հայերեն-ռուսերեն-անգլերեն տարբերակները առանձնացված/<br>9. Ծավալաթերթ / եռալեզու՝ հայերեն—ռուսերեն-անգլերեն տարբերակները առանձնացված<br>10. Շինարարության կազմակերպման նախագիծ<br>11. Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ<br>12. Հաշմանդամների համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ<br>13. Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ:<br>14. Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝<br>քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ (ինժեներատեխնիկական անվտանգություն, վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության միջոցառումներ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումներ<br>15. Նախագծով նախատեսված նյութերի և սարքավորումների երաշխիքային ժամկետների ցանկ<br>16. Ինտերիերի դիզայն ընդհանուր տարածքների, բոլոր տիպային սենյակների ներառմամբ՝ գունային լուծումներով (յուրաքանչյուր տիպի տիպային սենյակների համար հնարավոր է 1 ընդհանուր դիզայնի օրինակ), ներառյալ կահավորման նախագծերը ու կահույքի դիզայնի աշխատանքները, ընդ որում ներկայացնելով կահավորանքի մանրամասն տեխնիկական բնութագրեր և գունային/բրենդային լուծումները՝ բարձրորակ 3D վիզուալիզացիաներով ներկայացմամբ: |
| 15. | <u>Համաձայնեցումներ</u> | *<u>Նախագծի համաձայնեցում</u>*<br>1. Համայնքի ղեկավարի,<br>2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության,<br>3. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի,<br>4. Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի,<br>5. ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի,<br>6. ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի,<br>7. Ինժեներական ցանցերը շահագործող և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ |
| 16. | ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ) | Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և պատվիրատուին հանձնման ժամանակահատվածը նախատեսել պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից՝ 270 օրացուցային օր, որից<br>1. Նախնական փուլ - Տարածքի հետազոտություն՝ 60 օր,<br>2. «Նախագիծ» փուլը՝ 60 օր,<br>3. «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը՝ 130 օր:<br>Ընդ որում՝<br>• Նախնական փուլից հետո մնացած փուլերի մեկնարկը կլինի «ՈՒԵՖԱ»-ի կողմից ծրագրի իրականացման վերաբերյալ պաշտոնական դիրքորոշում ստանալուց հետո: |

| | | |
|---|---|---|
| | | • Էսքիզային նախագիծը ներկայացնելուց հետո նախագծման առաջադրանքի (ՃՀԱ) և անհրաժեշտ տեխնիկական պայմանների ձեռքբերման համար սահմանվում են լրացուցիչ 20 օրացուցային օրեր, որոնք ներառված են վերը նշված ժամկետներում, սակայն Փուլ 3-ի համար նախատեսված 130 օրերի մեկնարկը համարվում է դրանց ստացման օրը:<br>Այն պարագայում, եթե նախագծման առաջադրանքի (ՃՀԱ) համար ներկայացված դիմումը համայնքի կողմից ուղարկվում է խմբագրման, նախագծող կազմակերպությանը տրվում է 5 աշխատանքային օր նշված փոփոխություններն իրականացնելու համար: |
| 17. | <u>ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ</u> | 1. Պատվիրատուի կողմից նախագծային փաստաթղթերը լրամշակման վերադարձնելու պարագայում դրանց լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում:<br>ՆՆՓ-ն Պատվիրատուի նախաձեռնությամբ կներկայացվի պարզ և համալիր քաղաքաշինական փորձաքննության:<br>Ըստ անհրաժեշտության, եթե<br>2. պատվիրատուի նախաձեռնությամբ իրականացվող քաղաքաշինական *պարզ փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման»*, նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում:<br>3. պատվիրատուի նախաձեռնությամբ իրականացվող համալիր փորձաքննության գործընթացի արդյունքներով, եթե տրվում է բացասական եզրակացություն կամ դրական եզրակացություն՝ պայմանով, որ անհրաժեշտ է կատարել որոշակի լրամշակում, նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 20-օրյա ժամկետում: |
| 18. | ՄԱՏՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ | Նախնական փուլում ստացված արդյունքները ներկայացվում են Պատվիրատուին և Պատվիրատուի կողմից ընդունվելուց հետո համաձայն<br><br>ՀՀ կառավարության 07.08.2025թ. N 1089-Ա որոշման (հիմնավորում) համաձայն վերջինիս կվճարվի՝ 98 840 եվրո:<br><br>Երկրորդ՝ «Նախագիծ» փուլում Պատվիրատուին ներկայացվում է նախագծի էսքիզային տարբերակը, որը Պատվիրատուի ընդունումից հետո կվճարվի ծառայության պայմանագրի արժեքի 25%-ը:<br><br>Մնացած ֆինանսավորումը կկատարվի այն բանից հետո, երբ ստացվեն դրական գրավոր եզրակացություններ քաղաքաշինական պարզ փորձաքննությունից և համալիր փորձաքննությունից: |

– Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է ներկայացվեն երկլեզու՝ հայերեն և անգլերեն լեզուներով, էլեկտրոնային կրիչով, տեքստային և գծագրական նյութերը՝ CAD և PDF ֆորմատներով, նախահաշիվը և ծավալաթերթը՝ EXCEL տարբերակներով

*Էլեկտրոնային կրիչում ներառվող ֆայլերը պետք է ունենան պարունակությանը համարժեք անվանումներ, և զերծ լինեն կողմնակի ինֆորմացիայից:

Նախագծային փաստաթղթերի մշակման արդյունքում նախագծողը պետք է ներկայացնի նաև՝ շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ

- նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ՝ WORD տարբերակով
- նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ՝ WORD տարբերակով
- էներգաարդյունավետություն ապահովող միջոցառումների, սարքավորումների և նյութերի ցանկ՝ WORD տարբերակով

Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները,

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում,

Ջերմամեկուսիչ նյութեր՝ բազալտի հումքով մանրաթելային հանքաբամբակե սալերով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ք. Երևան, հանրապետության հրապարակ

կառավարական տուն 3

ՀՀ ֆինանսների նախարարության

աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011055424

ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

____________________ Գ. Եղիազարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**

<<Վենյուէրա Հոլդինգ>> ՍՊԸ

Ռոբոտնիցկա 286, Պովազսկա Բիստրիցա

017 01, Սլովակիա

Հ/Հ SK72 0900000000005239753437

ՀՎՀՀ 2024129701

Տնօրեն՝

--------------------------- Ն. Ջատկո

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1.1
24.11.2025 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-25/6 պայմանագրի

# RIBA փուլեր

| 0 Strategic Definition | 1 Preparation and Briefing | 2 Concept Design | 3 Spatial Coordination |
|---|---|---|---|
| • **Վայրի ստուգում և գնահատում**<br>Մարզադաշտի ներկա վիճակի, անվտանգության համակարգերի և գործողունակությունների լիարժեք տեխնիկական վերանայում:<br><br>• **Նախագծի նպատակների սահմանում**<br>Հիմնական նպատակների պարզում՝ տարողունակության ավելացում, կանոնակարգերի համապատասխանություն, կայունություն և համայնքային գործառույթ:<br><br>• **Հետաքրքրվող կողմերի ներգրավում**<br>Նախնական խորհրդատվություններ կառավարչական մարմինների, օգտագործող խմբերի և տեղական իշխանությունների հետ:<br><br>• **Նախնական բյուջեի և առաքման մոդելի պարզում**<br>Նախնական ծախսերի շրջանակ և RIBA և FIDIC մեթոդաբանությունների համեմատության քննարկում: | • **Ճարտարապետական վերանայման ծառայություն**<br>Առկա ճարտարապետության, տարածքային արդյունավետության, էսթետիկայի և կողմնորոշման գնահատում:<br><br>• **Հողամասի զննում և տեխնիկական աուդիտ**<br>Կառուցվածքային, մեխանիկական և շրջակա միջավայրի պայմանների վերլուծություն:<br><br>• **Նախագծի պլանավորում**<br>Քայլային աշխատանքային պլան՝ ժամանակացույցերով, կարևոր քայլերով և թույլտվությունների վերանայմամբ:<br><br>• **Հնարավորությունների ուսումնասիրություն և արժեքի գնահատում**<br>Ֆինանսական և տեխնիկական հարմարվողականության գնահատում՝ սցենարային մոտեցմամբ արժեքի հաշվարկով: | • **Կոնցեպտուալ և սխեմատիկ նախագծում**<br>Նստատեղերի, շրջանառության, սպասարկման և առևտրային տարածքների նախնական դասավորություններ:<br><br>• **Բյուջեի տարբերակների մոդելավորում և ֆինանսական սցենարների վերլուծություն:**<br>Փուլային ներդրումների մոդելավորում, հավասարակշռության մոդելավորում և շահագործման ծախսերի կանխատեսում:<br><br>• **Կարգավորող մարմինների համապատասխանության ուղեցույց՝**<br>խորհրդատվություն՝ ՖԻՖԱ-ի և ՈւԵՖԱ-ի 4-րդ կատեգորիայի չափանիշներին և տեղական կանոնակարգերին դիզայնի համապատասխանությունն ապահովելու համար: | • **Մանրամասն նախագծի պլանավորում**<br>Ներդաշնակ պլանավորում նախագծման փաթեթների, գնումների ժամկետների և հավանությունների համար:<br><br>• **Ներդաշնակված նախագծման համակարգում**<br>Կարողությունների համաժամեցում ճարտարապետության, ինժեներական և մասնագիտացված խորհրդատվությունների միջև:<br><br>• **Սցենարների մանրակրկիտ վերանայում**<br>Հակադարձումների հիման վրա աշխատանքների ծավալի և սցենարների վերանայում՝ ֆինանսավորման և հետաքրքրվող կողմերի հետագա արձագանքների հիման վրա: |

| 4 Technical Design | 5 Manufacturing and Construction | 6 Handover | 7 Use |
|---|---|---|---|
| **• Տենդերի փաստաթղթերի մշակում**<br>Լրիվ տեխնիկական բնութագրեր և քանակականացումների ցանկ (BoQ) գնումների գործընթացների համար:<br>**• Գնումների ռազմավարություն**<br>Ռազմավարություն ենթահավաքողների ներգրավման և փուլային առաքման համար:<br><br>**• Շինարարական մանրամասավորում**<br>Տեխնիկական դիագրամների և ինտեգրման փաթեթների պատրաստում: | **• Ապրանքների և ենթահավաքողների գնում**<br>Մրցակցային մատակարարման գործընթաց, մատակարարների ստուգում և պայմանագրերի հանձնման գործընթաց:<br><br>~~**• Լրիվ շինարարական և տեղադրման աշխատանքներ**~~<br>~~Բոլոր շենքային համակարգերի, կառույցների և խաղադաշտերի իրականացման աշխատանքներ:~~<br><br>**• Շինարարության հսկողություն և որակի վերահսկում**<br>Հսկողություն՝ կառուցման որակի և տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը ապահովելու համար: | ~~**• Կոմիսիոնավորում և համակարգերի փորձարկում**~~<br>~~Բոլոր տեղադրված համակարգերի գործառնական փորձարկում:~~<br>~~**• Վերջնական հանձնում և ուսուցում**~~<br>~~Փաստաթղթերի հանձնում և մարզադաշտի անձնակազմի գործառնական ուսուցում:~~<br><br>~~**• Ամփոփ տեխնիկական փաստաթղթերի հանձնում**~~<br>~~Վերջնական տեխնիկական դիագրամներ, ձեռնարկներ և համապատասխանության հաստատումներ:~~ | ~~**• Աշխատանքների ավարտից հետո աջակցություն**~~<br>~~Հեռախոսային/պահպանողական աջակցություն և սխալների լուծում:~~<br><br>~~**• Գրավի և երաշխիքների կիրարկում**~~<br>~~Անհատական պայմանագրերի և սպասարկման մակարդակի համաձայնագրերի կառավարման գործընթաց:~~<br><br>~~**• Երկարաժամկետ պահպանման պլանավորում**~~<br>~~Մասնագիտական շահագործման և սպասարկման (O&M) ռազմավարական պլանավորում և կյանքի ցիկլի ծախսերի մոդելավորում:~~ |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011055424
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

____________________ Գ. Եղիազարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**

<<Վենյուէրա Հոլդինգ>> ՍՊԸ
Ռոբոտնիցկա 286, Պովազսկա Բիստրիցա
017 01, Սլովակիա
Հ/Հ SK72 0900000000005239753437
ՀՎՀՀ 2024129701

Տնօրեն՝

-------------------------- Ն. Զատկո
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
24. 11. 2025 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-25/6 պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200/71 | ՀՀ Տավուշի մարզի Վանաձորում ՈՒԵՖԱ ստանդարտներով ֆուտբոլի մարզադաշտի կառուցման/վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություն | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 98 840 եվրո | 98 840 եվրո |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011055424
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_________________ Գ. Եղիազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
<<Վենյուէրա Հոլդինգ>> ՍՊԸ
Ռոբոտնիցկա 286, Պովազսկա Բիստրիցա
017 01, Սլովակիա
Հ/Հ SK72 09000000005239753437
ՀՎՀՀ 2024129701

Տնօրեն՝

-------------------------- Ն. Զատկո
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
24.11. 2025 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-25/6 պայմանագրի

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հh ________________________
հվhh ______________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելու վայրը _________________
հh__________________________
հվhh__________________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«      » «              » 20     թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /եվրո/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված N 3.1
24.11.2025 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-25/6 պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N _____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

Հավելված N 4
24. 11. 2025 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-25/6 պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_______________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ________________________-ի և ____________________-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

__________________-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «-------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

_____________________________________ _____________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳՐԻ ԱՆԴՈՐՐԱԳԻՐ N 000208 [1130857348]

**PAYMENT ORDER RECEIPT**

**«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ** ՊԿ\ID **1872**

**AMIO BANK CJSC** Ամսաթիվ\Date **20/11/25 16:57**

| Դեբետ\Debit | Կրեդիտ\Credit | Գումար\Amount |
|---|---|---|
| **ԴՐԱՄԱՐԿՂ** | **900008000664** | **AMD 4,408,770.00** |

Վճարող\Remitter
**ՍԻՄՈՆՅԱՆ ՀԵՂԻՆԵ**

Անձը հաստ.փաստ.\ID Number **AR0613287 005 05.03.2018**
Վճարողի բանկ\Remitter's Bank
**«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ**
**AMIO BANK CJSC**
Վճարողի Տարած.կոդ\Remitter's Area Code **99**
Սոցիալական քարտ\Social Number **5911880636**

Ստացող\Beneficiary
**Հայցի և պայմանագրի ապահովումը բանկային երաշխիքով կամ կանխիկ փողի ձևով**

Ստացողի բանկ\Beneficiary's Bank
**Գանձապետական բաժանմունք**
**Treasure division**

Գումարը բառերով\Amount in Words
***Չորս միլիոն չորս հարյուր ութ հազար յոթ հարյուր յոթանասուն դրամ***
Նպատակ\Details
**ՀՀՔԿ-ՀԱՄԽԾՁԲ-25/6 պայմանագրի ապահովում,ՎԵՆՅՈՒԷՐԱ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ, ՀՎՀՀ `2024129701**

| Գանձում I\Commission I | Հաշիվ\Account | Գանձման գումար\Commission |
|---|---|---|
| | **ԴՐԱՄԱՐԿՂ** | **AMD 4,408.80** |

Գանձման գումարը բառերով\Commission in Words
***Չորս հազար չորս հարյուր ութ դրամ 80 լումա***

Կատարող\Maker **Լիանա Մինասյան** Կ.Տ.
Գանձապահ\Cashier ST.